

Հաստատված է՝

«Գյումրու Մ. Նալբանդյանի անվան

պետական մանկավարժական ինստիտուտ»

ՊՈԱԿ-ի գիտական խորհրդի

« 31 » մարտի 2014թ. նիստում

Խորհրդի նախագահ՝ _____ Վ. Գրիգորյան

ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

«ԳՅՈՒՄՐՈՒ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ

1. ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

- 1.1 Մագիստրոսական թեզը (այսուհետ՝ ՄԹ) ավարտուն, տեսական, փորձարարական հետազոտական աշխատանք է՝ նախատեսված մագիստրոսի կրթական ծրագրով: Աշխատանքը ցույց է տալիս մագիստրոսի կողմից հիմնական և հատուկ գիտելիքների, կարողությունների և հմտությունների տիրապետման աստիճանը, որոնք անհրաժեշտ են մասնագիտական և հետազոտական գործունեություն իրականացնելու համար: ՄԹ-ն ապահովում է մասնագիտական գործունեության ոլորտում ձեռք բերված գիտելիքների և մեթոդաբանական պատկերացումների ու մեթոդական հմտությունների իրականացման ամբողջություն:
- 1.2 ՄԹ-ն մագիստրոսի կողմից հրապարակային պաշտպանության ներկայացվող հետազոտական աշխատանքի է, որի արդյունքները արտացոլված են եզրակացություններում (դրույթներում, ամփոփումներում, վերջաբանում): Այն պետք է ունենա տեսական և գործնական նշանակություն, պարունակի գիտականորեն հիմնավորված առաջարկություններ, ունենա ներքին միասնական կառուցվածք և հետազոտության խնդիրների լուծմանը նպատակաուղղված տրամաբանական շարադրանք:

2. ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ ԹԵՄԱՅԻ ՈՒ ԳԻՏԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՍՏԱՏՈՒՄ

- 2.1 ՄԹ-ի թեմաները մշակվում և ձևակերպվում են մասնագիտական ամբիոններում:
- 2.2 ՄԹ-ի թեմաները մասնագիտական ամբիոնների կողմից մինչև հոկտեմբերի 10-ը ներկայացվում են ֆակուլտետային խորհուրդի հաստատմանը:
- 2.3 ՄԹ-ի թեմայի ընտրությունն իրականացվում է առաջին կուրսի առաջին կիսամյակի ընթացքում. մագիստրոսը մինչև դեկտեմբերի 10-ը մասնագիտական ամբիոնի վարիչին ներկայացնում է հայտադիմում ՄԹ-ի թեմայի և գիտական ղեկավարի ընտրության վերաբերյալ (Հավելված 1): Մասնագիտական ամբիոնը մինչև դեկտեմբերի 20-ը ֆակուլտետային խորհրդի հաստատմանն է ներկայացնում ՄԹ-ի թեմաները՝ ըստ կատարող ուսանողների և ղեկավարների՝ համապատասխան ձևաչափով (Հավելված 2):
- 2.4 ՄԹ-ի թեմայի/ղեկավարի փոփոխությունը հնարավոր է մասնագիտական ամբիոնի որոշմամբ մագիստրոսի՝ մինչև առաջին կուրսի երկրորդ կիսամյակի ավարտը:
Առանձին դեպքերում ղեկավարի փոփոխությունը հնարավոր է նաև ավելի ուշ՝ նույն ընթացակարգով:
- 2.5 ՄԹ-ի թեմայի վերաձևակերպում հնարավոր է մասնագիտական ամբիոնի որոշմամբ՝ մինչև ՄԹ-ի պաշտպանության կազմակերպումը:
- 2.6 ՄԹ-ի գիտական ղեկավար կարող են նշանակվել թողարկող ամբիոնի, ինստիտուտի այլ ամբիոնների պրոֆեսորները, դոցենտները, ինչպես նաև գիտահետազոտական հաստատությունների աշխատակիցները: ՄԹ-ի ղեկավարը պետք է ունենա առնվազն գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

3. ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՁևԱՎՈՐՈՒՄԸ

- 3.1 ՄԹ-ի բովանդակությունը պետք է բավարարի շրջանավարտի մասնագիտական պատրաստվածության վերաբերյալ բարձրագույն մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշչի պահանջները և ներառնի՝
- հետազոտության խնդրի ձևակերպում և վերլուծություն, որը կատարվում է գիտական և արտոնագրված աղբյուրների ուսումնասիրման հիման վրա,
 - խնդրի լուծման մեթոդի կամ միջոցի առաջարկ/հիմնավորում,
 - մագիստրոսի կողմից կատարված տեսական, փորձարարական հետազոտությունների նկարագրություն,
 - ստացված արդյունքներն ու դրանց քննադատական վերլուծությունը,
 - ստացված արդյունքները մասնագիտական գործունեության մեջ օգտագործելու եզրահանգումներ,
 - օգտագործված գրականության /աղբյուրների/ ցանկ:
- 3.2 ՄԹ-ի կառուցվածքային չափորոշիչները պետք է համապատասխանեն ներկայացված պահանջներին: ՄԹ-ի ծավալը (առանց հավելվածների) սահմանվում է 40-60 տպագրական էջ:
- 3.3 ՄԹ-ն ունի հետևյալ կառուցվածքը.

- 3.3.1 Տիտղոսաթերթ
- 3.3.2 Բովանդակություն (ցանկ)
- 3.3.3 Ներածություն
- 3.3.4 Հիմնական մաս
- 3.3.5 Եզրակացություն
- 3.3.6 Օգտագործված գրականության ցանկ
- 3.3.7 Հավելված (եթե առկա է)

3.3.1 **Տիտղոսաթերթ**. Տիտղոսաթերթն ունի տեղեկատվական բնույթ, որի առաջին տողում գրվում է նախարարության, երկրորդում՝ բուհի, երրորդում՝ ֆակուլտետի, չորրորդում՝ մասնագիտությունը թողարկող ամբիոնի անվանումը: Հաջորդ տողում նշվում է ՄԹ-ի թեման, ապա՝ ուսանողի անունը, հայրանունը, ազգանունը, որին հաջորդում է գիտական դեկավարի (խորհրդատուի՝ եթե կա) անվան սկզբնատառն ու ազգանունը, գիտական աստիճանն ու կոչումը, և դրվում է նրա (նրանց) ստորագրություն(ներ): Ավելի ներքևում գրվում է՝ **Թույլատրվում է պաշտպանության**, ապա՝ **Ամբիոնի վարիչ** (անվան սկզբնատառն ու ազգանունը) և ստորագրությունը: Հաջորդ տողում գրվում է **Գրախոս** բառը, որի անունը և գիտական աստիճանն ու կոչումը գրվում է ձեռագրով: Տիտղոսաթերթի վերջին տողի մեջտեղում նշվում է ՄԹ-ն պաշտպանության ներկայացնելու վայրը և տարեթիվը: Տիտղոսաթերթը չի էջադրվում /Հավելված 3/:

3.3.2 **Բովանդակություն (ցանկ)**. Բովանդակությունը պետք է համապատասխանի ՄԹ-ի տեքստին: Այն սկսվում է ներածությամբ և ընդգրկում է աշխատանքի բաժինների, ենթաբաժինների անվանումները, եզրակացությունը, օգտագործված գրականության ցանկը, հավելված(ներ)ի անվանում(ներ)ը (եթե առկա է) /Հավելված 4/:

3.3.3 **Ներածություն**. ՄԹ-ի ներածությունը պետք է արտացոլի՝

- ՄԹ-ի թեմայի արդիականությունը,
- աշխատանքի նպատակն ու խնդիրները,
- աշխատանքում օգտագործվող հետազոտության մեթոդները:

3.3.4 **Հիմնական մաս**. ՄԹ-ի հիմնական մասում բերվում են առաջադրույթները, փորձերի ու հետազոտությունների արդյունքները, փաստերն ու փաստարկները, հաստատող ու հակադիր կարծիքները, հանգամանորեն քննարկվում են դրանք, առանձին-առանձին տրամաբանական եզրահանգումներ են արվում, հաստատվում են առաջադրույթները, կանխակալ հայտարարությունը, թեական կարծիքը կամ վարկածը, կատարվում են ընդհանրացումներ: Հիմնական մասը կարող է բաժանվել գլուխների, որոնք սկսվում են նոր էջից, և ենթագլուխների:

3.3.5 **Եզրակացություն**. ՄԹ-ի այս մասում կարճ, հստակ կրկնվում են բովանդակության մեջ փորձի ու փաստարկումների արդյունքների հիման վրա արդեն արված առանձին-առանձին եզրահանգումները և թվարկվում՝ ամփոփելով ամբողջ աշխատանքը:

3.3.6 **Օգտագործված գրականության ցանկ.** ՄԹ-ի այս բաժնում նշվում են բոլոր այն աղբյուրները, որոնցից օգտվել է ուսանողը և հիշատակել աշխատանքում: Այս ցանկում նախ նշվում են մենագրությունները, ուսումնասիրությունները, ապա հոդվածները, պարբերականները /Հավելված 5/: Պետք է նշել հեղինակի ազգանունը և անվան առաջին տառը, ապա՝ ստեղծագործության (գրքի, հոդվածի և այլն) անվանումը, հրատարակության տեղն ու ժամանակը, էջերի քանակը:

Մեջբերումներ, հղումներ անելիս ավելացվում է նաև համապատասխան էջը:

3.3.7 **Հավելված.** ՄԹ-ի վերջում գետեղվում է հավելվածը (եթե կա): Հավելվածի էջերը համարակալվում են հռոմեական թվանշաններով:

3.4 **ՄԹ-ի ձևավորման կանոնները.** ՄԹ-ի համակարգչային շարվածքով տեքստը ձևավորվում է՝

- A4 թղթի վրա
- Էջերում 28-30 տող
- Էջի չորս կողմում՝ լուսանցքներ. վերևից և ներքևից՝ 20մմ, ձախ կողմում՝ 25-30մմ, աջ կողմում՝ 10մմ
- Միջտողային հեռավորությունը՝ 1.5 տողաչափ
- Տեքստի տառաչափը՝ 12, բաղադրամասների և գլուխների (ենթագլուխների) տառաչափը՝ 16, տառատեսակը՝ Sylfaen
- Պարբերությունները՝ չորս տառաչափ խորքից
- Էջերը համարակալվում են՝ սկսած անվանաթերթից (որը չի էջադրվում)
- Գլուխները, ենթագլուխները համարակալվում են կա՛մ արաբական, կա՛մ հռոմեական թվանշաններով
- Հղումները, ծանոթագրությունները կատարվում են ավելի փոքր տառաչափով՝ տեքստից փոքր գծով անջատված
- Ամբողջ տեքստը՝ միագույն
- ՄԹ-ի վերջին էջին մագիստրոսը ստորագրում է:

4. ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

4.1.1 Յուրաքանչյուր ուսումնական կիսամյակի ավարտին ղեկավարի պարտադիր մասնակցությամբ մագիստրոսը մասնագիտական ամբիոն է ներկայացնում հաշվետվությունն ըստ ժամանակացույցի և ձևաչափի: Հաշվետվությունը գնահատվում է 100 միավորանոց սանդղակով, և դրական գնահատականի դեպքում մագիստրոսը կուտակում է ուսումնական պլանով հետազոտական աշխատանքին տրամադրված կրեդիտները:

4.1.2 Մագիստրոսական ուսումնառության չորրորդ կիսամյակում՝ նախապաշտպանությունից մեկ ամիս առաջ, մագիստրոսը ՄԹ-ի նախնական տարբերակը հանձնում է գիտական ղեկավարին: Վերջինիս կողմից կատարված

դիտողությունների և առաջարկությունների հիման վրա կազմվում է ՄԹ-ի վերջնական տարբերակը (երկու օրինակ) և ղեկավարի կարծիքի հետ (երկու օրինակ) ներկայացվում մասնագիտական ամբիոն մինչև ապրիլի 15-ը:

- 4.2.1 Մասնագիտական ամբիոնը, ըստ ժամանակացույցի, կազմակերպում է ՄԹ-ի նախապաշտպանությունը, որի ընթացքում որոշվում է՝
1. թույլատրել հրապարակային պաշտպանության՝ նշանակելով գրախոս,
 2. վերադարձնել լրամշակման և կազմակերպել կրկնակի նախապաշտպանությունն ոչ ուշ, քան հրապարակային պաշտպանությունից մեկ շաբաթ առաջ,
 3. չթույլատրել պաշտպանության՝ նշելով պատճառները: Հրապարակային պաշտպանության չթույլատրված մագիստրոսի պաշտպանության հարցը կարող է ճշգրտվել վերջինիս դիմումի համաձայն, որը քննարկվում է միայն նոր ուսումնական տարվա սկզբին:
- 4.2.2 Ղեկավարի բացասական կարծիքի դեպքում ամբիոնի որոշման համաձայն ՄԹ-ն կարող է թույլատրվել հրապարակային պաշտպանության՝ ամբիոնի որոշմանը կցելով ղեկավարի հատուկ կարծիքը:
- 4.3.1 Պաշտպանությունից առնվազն մեկ օր առաջ համապատասխան մասնագիտական ամբիոնը ղեկանատ է ներկայացնում.
- մագիստրոսական թեզը (մեկ օրինակ),
 - ղեկավարի կարծիքը (մեկ օրինակ)՝ հաստատված ամբիոնի նիստում և վավերացված ֆակուլտետի ղեկանի կողմից,
 - գրախոսություն (մեկ օրինակ)՝ հաստատված գրախոսի աշխատավայրում:
- 4.4.1 Հրապարակային պաշտպանության ժամանակ ՄԹ-ի ներկայացման համար մագիստրոսին տրվում է մինչև 20 րոպե ժամանակ:
- 4.4.2 Հրապարակային պաշտպանության ողջ ընթացքը արձանագրվում և ձայնագրվում է: Ձայնագրությունը պահպանվում է հրապարակային պաշտպանության արդյունքները հայտարարելուց հետո մինչև 24 ժամ:
- 4.4.3 Մագիստրոսին հարցեր տալու և հարցերին պատասխանելու համար տրվում է մինչև 30 րոպե ժամանակ:
- 4.4.4 Հարցուպատասխանին հետևում է ղեկավարի և գրախոսի կարծիքների հրապարակումը: Վերջիններիս բացակայության դեպքում կարծիքները ներկայացնում է ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի քարտուղարը: Կատարված դիտողությունների վերաբերյալ մագիստրոսը կարող է ունենալ պատասխաններ:
- 4.4.5 ՄԹ-ի պաշտպանության արդյունքները գնահատվում են 100 միավորանոց համակարգով: Գնահատումը հաշվի է առնում ՄԹ-ի կատարման որակը՝ ՄԹ-ին ներկայացվող պահանջներին համապատասխան, բովանդակությունը, մագիստրոսի էլոյթը, նրա պատասխանները հանձնաժողովի հարցերին և գրախոսի դիտողություններին:
- 4.4.6 ՄԹ-ի պաշտպանությունից «անբավարար» գնահատական ստացած շրջանավարտը թույլատրվում է կրկնակի պաշտպանության ոչ շուտ, քան մեկ տարի հետո: Հանձնաժողովի որոշմամբ նա կարող է պաշտպանել նույն

աշխատանքը համապատասխան լրամշակումից հետո կամ ընտրել ՄԹ-ի նոր թեմա/դեկավար՝ նույն ընթացակարգով:

4.4.7 Սույն կանոնակարգում չքննարկված խնդիրները լուծվում են համաձայն ՀՀ կառավարության որոշումների և ՀՀ ԿԳ նախարարության կարգերի:

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ԳՅՈՒՄՐՈՒ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ»
ՊՈԱԿ

ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ ԹԵՄԱՅԻ և ԳԻՏԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ
ՀԱՅՏԱԴԻՄՈՒՄ

ամբիոնի վարիչ _____
ամբիոնի անվանումը _____ Ա. Հ. Ա.
ուսանողն/ուհի/ _____
մասնագիտություն, կուրս _____ Ա. Հ. Ա.

ԴԻՄՈՒՄ

Խնդրում եմ հաստատել մագիստրոսական թեզի _____
_____ թեման և
ՄԹ-ի թեմայի անվանումը _____

ղեկավար նշանակել _____
/Ա. Հ. Ա. գիտական աստիճան, կոչում, պաշտոն, աշխատանքի վայր/

_____ :
ամսաթիվ _____ ուսանողի ստորագրությունը և հեռախոսի համարը, էլ. հասցեն

Մագիստրոսական թեզի թեմային և ղեկավարմանը համաձայն եմ:

_____ :
ամսաթիվ _____ ղեկավարի Ա. Հ. Ա. և ստորագրությունը և հեռախոսի համարը, էլ. հասցեն

_____ ամբիոնի գծով մագիստրատուրուսական թեզերի թեմաների հաստատման տեղեկագիր

20__ - 20__ ուստարի

	ՖԱԿՈՒԼՏԵՏ՝ _____ Ամբիոն՝ _____	ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ՝ _____		ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ՝ _____
	Թեզի վերնագիր	Ուսանող (ԱՀԱ)	Ղեկավար (ԱՀԱ)	Ղեկավարի կոչումը, գիտական աստիճանը
1.				
2.				
3.				
4.				
5.				
6.				
7.				

Ամբիոնի վարիչ՝

/ԱՀԱ/

/ստորագրություն/

Ֆակուլտետի ղեկան՝

/ԱՀԱ/

/ստորագրություն/

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ԳՅՈՒՄՐՈՒ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՊՈԱԿ

ՊԱՏՄԱԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԵՎ ՆՐԱ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՅԻ ԱՄԲԻՈՆ

ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶ

ԱՐՄԵՆՈՒՀԻ ԱՐՄԵՆԻ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՀԵՔԻԱԹՆԵՐԻ ԼԵԶՈՒՆ

Գիտական ղեկավար՝

Ալ. Մակարյան

Բան.գիտ. թեկնածու, դոցենտ

Թույլատրվում է պաշտպանության (ձեռագիր)

Ամբիոնի վարիչ՝

Ալ. Բարսեղյան

Բան.գիտ. դոկտոր

Գրախոս՝

Ա. Պողոսյան (ձեռագիր)

Բան.գիտ. դոկտոր

Գյումրի-2014

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն	2
Գլուխ Ա /վերնագիր/	12
Գլուխ Բ /վերնագիր/	33
Եզրակացություն	55
Օգտագործված գրականության ցանկ.....	57
Հավելված	60

Օգտագործված գրականության ցանկ

Ա. Մենագրություններ, ուսումնասիրություններ

1. Աբեղյան Մ., Հայոց լեզվի տեսություն, Եր., 1965, 245 էջ:
2. Աբրահայան Ա., Աղբյուրագիտական վիճելի մի քանի հարցերի մասին, Պատմա-բանասիրական հանդես, 2(73), Եր., 1976, էջ 173-182:
3. Степанов Ю., Основы общего языкознания, Москва, 1975, 271 стр..
4. Roel K., Versuch einer systematischer Grammatik der Schambalaspache, Hamburg, 1911, 210 seite.
5. <https://www.google.am/webhp/source>

(Առցանց աղբյուրը հասանելի է 2014թ. հունվարին)

Բ. Պարբերականներ

1. «Մեղու», N 2, Կ.Պոլիս, 1872թ.:

ԿԱՐԾԻՔ

«

»

Ուսանողի Ա.Ն.Ա.

Թեզի թեմայի անվանումը

մագիստրոսական թեզի մասին

Կարծիքի մեջ ղեկավարը ներկայացնում է թեմայի արդիականությունը, մագիստրոսի աշխատանքի ինքնուրույնության աստիճանը, ընտրված թեմային առնչվող նյութերի հավաքագրման, ուսումնասիրության, վերլուծության համապատասխանությունը աշխատանքի բովանդակությանը, կատարում է հետազոտության մեթոդիկայի գնահատում, բացահայտում աշխատանքի որակը: Կատարվում են դիտողություններ, հստակ շարադրվում է եզրակացությունը և կատարվում է առաջարկություն գնահատման վերաբերյալ:

Գիտական ղեկավար՝

ստորագրություն

Ա.Ա.

գիտական կորչումը, աստիճանը

ամիս, ամսաթիվ

ԿԱՐԾԻՔ

«

»

Ուսանողի Ա.Ն.Ա

Թեզի թեմայի անվանումը

մագիստրոսական թեզի մասին

Գրախոս՝

_____ ստորագրություն

_____ Ա.Ա.

_____ գիտական կորչումը, աստիճանը

Հիմնարկության ղեկավար՝

_____ ստորագրություն

_____ Ա.Ա.

ամիս, ամսաթիվ

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ԳՅՈՒՄՐՈՒ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՊՈԱԿ

Կազմակերպության անվանումը, ղեկավարի Ա.Հ.Ա.

Խնդրում ենք Ձեր _____

հաստատության որոշակի ստորաբաժանում

ուղարկել _____

ուսանողի Ա.Հ.Ա., ՄԹ-ի անվանումը

մագիստրոսական թեզը՝ գրախոսության համար:

ԳՊՄԻ-ի _____ ամբիոնի վարիչ _____

/Ա.Ա.Հ., ստորագրություն/

_____ / ամսաթիվ/